«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2017 թվականի

«Ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) խորհրդի հաշվետվությունը կատարված աշխատանքների մասին» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) խորհրդի հաշվետվությունը կատարված աշխատանքների մասին»** հարցը (զեկուցող՝ ուսանողական գիտական ընկերության խորհրդի նախագահ Հ.Ա.Արզումանյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. անցած մեկ տարվա ընթացքում ուսանողական գիտական ընկերությունը մասամբ կատարել է իր գործառույթները:

Հաշվետու ժամանակահատվածում կայացել է ՈՒԳԸ 37-րդ նստաշրջանի առաջին փուլը, աշխատանքներ են կատարվել ուսանողների շրջանում, ինչպես նաև ապահովվել է համագործակցություն այլ բուհերի հետ:

Գիտական խորհուրդը, միաժամանակ, նշում է՝ ՈՒԳԸ նպատակների լիարժեք իրագործման համար կատարվող աշխատանքները դեռևս բարելավման կարիք ունեն:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **ՈՒԳԸ աշխատանքները գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝**
   1) ամբիոնների նիստերում հաստատել ՈՒԳԸ տարեկան աշխատանքների թեմաները.
   2) նշանակել ամբիոնային ՈՒԳԸ պատասխանատուներ և գիտական ղեկավարներ ամբիոնների փորձառու դասախոսներից:

3. **Հանձնարարել դեկաններին՝**
   1) քննարկել և մշտապես վերահսկել ՈՒԳԸ աշխատանքները ֆակուլտետներում և ամբիոններում.

4. **Հանձնարարել ՈՒԳԸ խորհրդին՝**
   1) սույն թվականի ապրիլին ավարտել ՈՒԳԸ 37-րդ նստաշրջանի անցկացումը.
   2) մշակել և ներկայացնել ուսանողներին ՈՒԳԸ աշխատանքներով զբաղվելու խթանման ծրագրեր.
   3) հաստատել գիտական կապեր ՀՊՏՀ-ի հետ համագործակցող բուհերի ՈՒԳԸ-ների հետ:

5. **Որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսանողների և շրջանավարտների հետ աշխատանքների գծով պրոռեկտոր Ս.Ս.Խաչատրյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

17.03.2017 թ.